

ՆԱԽԱԲԱՆ ԶՈՐՐՈՐԴ ՀԱՏՈՐԻ

«Հայ ժողովրդական հեքիաթների» գիտական հրատարակության չորրորդ հատոկն ընդգրկում է հիմնականում Երրանդ դաշտավայրի՝ այժմյան Լենինական (պատմական Կումայրի. հետագայում՝ Ալեքսանդրապոլ) քաղաքի և նրա շրջակայքի՝ Ախուրյանք, Աղինի, Արթիկի, Ապարանի, Դուկասյանի շրջանների ապա. պատմական Հայաստանի Բասենի, Կարեռ (Էրզրումը) ու Ջալախքի (Ախալցխա, Ախալքալաք) գավառների ժողովրդական հեքիաթները:

Աշխարհագրական դիրքով Կարինը (Էրզրում) գտնվում է Հայկական բարձրավանդակի ամենաբարձրստիկ մասում: Սա հրենից ներկայացնում է մի սարահարթ, որի միջին բարձրությունը ծովի մակերևույթից հասնում է 1800—2500 մետրի: Հյուսիսային կողմից Արեւելա-առնտական լեռնաթղ նույն ջաճանում են Սև ծովի ափաստինից: Հարավային կողմից ընկած է հինգույշ, արևելքից՝ Դավա-Բոլունի լեռները:

Այս տեղավայրի կենտրոնական և ավելի բարձրադիր մասը Կարնո դաշտն է, որն իր բարձրությամբ իջնում է Հայկական բարձրավանդակի վրա և պատմական անցյալում կոչվել է Բարձր Հայք: Կարնո դաշտում է գտնվում Կարին (Էրզրում) քաղաքը: Էրզրումը գտնվում է Կարնո հարթության հարավ-արևելյան մասում, Փայան-Ջուլյանի լեռնալանջերին՝ ծովի մակերևույթից 1857 մ. բարձրության վրա:

Զորրորդ դարի վերջերին, Արշակունյաց դինաստիայի անկումից հետո Կարինը ընկնում է Բուլղանդական տիրապետության տակ:

648 թվականին արաբները նվաճում են Կարինը, որից հետո և կոչվում է Արպուս-Էրզրում, որ նշանակում է Ռումի երկիր (արպ-երկիր, տերիտորիա, իսկ աումը՝ Հողմ):

Ապառ XIII—XIV դարերից Էրզրումը անցնում է մերթ պարսիկների, մերթ թուրքերի տիրապետության տակ: Ռուսները առաջին անգամ Էրզրումը գրավել են 1829 ապա, 1830 թվականին, վերջին անգամ՝ 1916 թվականին: 1918 թվականին ռուսական բանակի ետ քաշվելու հետևանքով չգալի թվով հայեր Էրզրումից և նրա շրջաններից գաղթում են Արևելյան Հայաստան ու Ռուսաստան: Մեծ թվով հայեր

հաստատվում են Ջավախքում՝ Ախալցխա, Ախալքսղաք, Ղարսում ու Ալեքսանդրապոլում:

Տեղագրական, աշխարհագրական դիրքով Կարնո գավառն Ռաջորդում է Բասենի դաշտավայրը: Բասենը ընկած է Էրզրումից դեպի արևելք Դավա-Բոլուսի լեռներից այն կողմ: Բասենի Ռովիտը եղել է Բարձր Հայքի շտեմարանը: Այստեղ կարևոր բնակավայր է եղել Հասան-Ղալան, որը նշանավոր բերդաքաղաք է, այստեղից են անցնում Ղարս-Էրզրում երկաթուղին և Տրապիզոն-Թավրիզ տանող ճանապարհները: Հասան-Ղալան գտնվում է Կարինից 45 կմ. հեռավորության վրա: Նշանավոր է իր քաղնիքներով ու քարվանսարաններով:



Կարինից և Բասենից դեպի Ռյուսիս-արևելք գտնվում է Հայաստանի Ռաջաշատ և Ռայաշատ գավառներից մեկը՝ Եփրակի դաշտավայրը, որը ընկած է Ջավախքից դեպի հարավ:

Եփրակի դաշտավայրը պատմական տարբեր ժամանակներում տարբեր սահմաններ է ունեցել: Նրա տեղիտորիայի մասերն են կազմել մի շարք գավառներ, որոնք ժամանակի ընթացքում անջատվել ու բնակչության կազմով և տեղագրությամբ առանձին միավոր են կազմել:

Տեղագրական, ազգագրական տեսակետից Եփրակի բնաշխարհի հիմնական գավառներն են եղել Վանաձղն ու Տաշիր-Ձորագետը: Պատմական Եփրակը կոչվել է Անի-Եփրակի թագավորություն, որը իր զարգացման զազաթնակետն է ապրել Ռալոց Գագիկ Առաջին թագավորի օրոք (990—1020 թթ.), նրա ժամանակ է, որ ընդարձակվում են Անի-Եփրակի թագավորության սահմանները, և արևելքում հասնում մինչև Աղվանից Պարտավ քաղաքի մոտերքը, արևմուտքում՝ մինչև Բասեն, հարավում՝ մինչև Մանազկերտ, իսկ Ռյուսիսում՝ մինչև աղվանական Շամշոր քաղաքը:

Եփրակի բարձրավանդակը գտնվում է Հայաստանի Ռյուսիս-արևմտյան մասում: Նրա հարավ-արևմտյան սահմանն է կազմում Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր լեռներից մեկը՝ քառազազաթ Արագածը, Ռյուսիսից՝ Փամբակի լեռնաշղթայի մի շարք լեռնաբազուկները, արևմուտքում Եփրակի անմիջական շարունակությունն է կազմում Վանաձղի (Կարսի) սարահարթը: Բուն Եփրակը իրենից ներկայացնում է ալիքավոր բլրապատ մի բարձրադիր սարահարթ:

Եփրակը Հայաստանի ամենահին մարդաբնակ գավառներից մեկն է: Նյութական կուլտուրայի մնացորդներից երևում է, որ Եփրակում մարդը հանդես է եկել նախապատմական ժամանակներից: Ըստ մեր պատմահոր՝ Մովսես Խորենացու, Եփրակ անունը սերում է ալվանդական Շարա նահապետի անունից:

Հայագետների կարծիքով Եփրակ անունը ծագում է կիմերական շիրակներ, կամ սիրակներ կոչված ցեղի անունից:

Եփրակի դաշտավայրի հնագույն բնակիչները սկզբից ևեթ պաղովել են որսորդությամբ, անասնապահությամբ և երկրագործությամբ: Պատահական չէ, որ ներկա հատորի հեքիաթներում արտացոլվել են Եփրակի հարթավայրի բուսական և կենդանական աշխարհը, հեքիաթների հերոսների մեծ մասը «ավճուրկուն», «ավղուշ» է անում, «Ռոտաղ» կամ «ռանչպար» է և այլն:

Երակը IV դարի կեսերից մինչև VIII դարի վերջը գտնվում էր հալ իշխանական տներից մեկի՝ Կամսարականների ձեռքին, այս շրջանում Երակը տվեց ճարտարապետական սքանչելի կոթողներ՝ եկեղեցիներ, կամուրջներ, քարվանսարաններ:

Երակի սարահարթի հարավ-արևմտյան մասում հիմնադրվեց պատմական Անին, որը դարձավ Բագրատունյաց թագավորանիստ քաղաքը: Այստեղից էին անցնում առևտրական բազմաթիվ ճանապարհներ՝ Տրապիզոն, Թավրիզ, Պարտավ, Մանազկերտ և այլն:

Միջնադարյան հալ իրականության մեջ Անին բացառիկ դեր է խաղացել ինչպես Երակի, նույնպես և Հայաստանի համար:

Բագրատունյաց թագավորության օրոք էր, որ Երակում վարգացավ առևտուրն ու կատարելության հասան արհեստները:

XI դարի 40-ական թվականներին Բյուզանդական կայսրությունը, որ արդեն նվաճել էր Հայաստանի զգալի մասը, հարձակումներ է կատարում Անիի վրա և 1045 թ. գրավում Անին: Անիի թագավորության անկումը հալ ժողովրդի և առանձնապես Երակի բնակչության համար ունենում է ճակատագրական նշանակություն:

Հայաստանի շատ գավառների, գերազանցապես Երակի, բնակիչների մեծ մասը օտարների հալածանքներից խուսափելու նպատակով բռնում է պանդխտության և գաղթի ուղին, գնալով դեպի Փոքր Ասիա, Կիլիկիա և այլուր:



Պատմական անցքերի բերումով հետագա դարերում Հայաստանը անընդհատ ծնթարկվում է օտարերկրյա նվաճողների հարձակումներին:

XIX դարի երկրորդ քառորդի սկզբում Արևելյան Հայաստանը ապստաղվում է պարսկական լծից և միանում ցարական Ռուսաստանին, որտեղ հալ ժողովրդի կյանքը համեմատաբար բարվոք էր: 1828—29 թթ. Ադրիանապոլսում կնքված դաշնագրով Արևմտյան Հայաստանում ապրող հալ բնակիչներին թույլատրվում էր տեղափոխվելու Արևելյան Հայաստան: Ահա այս ժամանակ էր, որ պանդխտության հոծ շարժում սկսվեց Արևմտյան Հայաստանից դեպի Արևելյան Հայաստան:

Արևմտյան Հայաստանից գաղթում են գերազանցապես Էրզրումի, Բասենի, Ալաշկերտի, Խոտորջուղի շրջանների հայերը և բնակություն հաստատում հատկապես Երակում՝ Ալեքսանդրապոլ և նրա շրջակայքի շրջաններում՝ Ախուրյան, Աղբաբա (այժմյան Դուկասյան), Արթիկ, Ադին, Ապարան և այլն:

Էրզրումից գաղթողները մեծ մասամբ բնակություն են հաստատում պատմական Ջավախքի՝ Ախալցխա, Ախալքալաք բնակավայրերում (այժմ՝ Վրացական ՍՍՌ), և պատահական չէ, որ այս հատորի հեքիաթները դասակարգված ինքնընտանյան Էրզրումի ու Ջավախքի հեքիաթները կազմեցին մի խումբ, քանի որ նրանք իրենց բարբառով ու խոսվածքով փաստորեն նույնն են, այն տարբերությամբ, որ մեկինը գրի է առնված Ջավախքում (որի բնակիչները նույն էրզրումցիներն են), մյուսինը՝ Էրզրումում կամ այլ տեղ:

Երակի դաշտի բնակիչների զգալի մասը Հայաստանի պանապան վայրերից տարբեր ժամանակ եկած գաղթականներ ու պանդուխտներ են, որոնք բերելով իրենց մայրենի բարբառն ու կենցաղը, հետագայում էլ պահպանել են մայրենի բարբառի քնորոշ ձևերն ու դարձվածքները, բառերն ու ոճերը: Նույն տեղավայրից գաղթած, ասենք Բասենի տարբեր գյուղերի (Խար, Հարանքար, Երասխաձոր), բնակիչների խոսվածքները ընդհանուր նմանությունների հետ մեկտեղ ունեն հնչյունական և ձևա-

բանական լուրահատկություններ, որոնք առաջացել են գաղթողների տարրեր վայրեր բնակվելու և բնիկների լեզվի, բարբառի ազդեցությունը կրելու հետևանքով:

Տերիտորիալ մալր բարբառի՝ Կարնո բարբառի առանձնահատկությունները լավ են պահպանվել Ալեքսանդրապոլի, Ջավախքի խոսվածքներում:

Ներկա հատորում պետեղված հեքիաթները մեծ մասամբ գրի են առնված Արևմտյան Հայաստանից գաղթած հայերից, այդ պատճառով էլ հեքիաթների մեջ բավականին շատ են օտար (թուրքերեն և պարսկերեն) փոխառյալ բառերը:

Ռուս-թուրքական պատերազմից հետո Արևելյան Հայաստան տեղափոխված հայերի հեքիաթներում զգալի կերպով նկատվում է նաև ռուսական բառերի (ստաքան, կոպվաթ, բոչկա, կոփանի, ուլից, պապիրոպ և այլն) գործածությունը:



«Հայ ժողովրդական հեքիաթների» գիտական հրատարակության ներկա՝ չորրորդ հատորի համար բնագրեր են ծառայել հիմնականում Երվանդ Լալայանի 1911—1916 թթ. ղեկավարած բանահյուսական խմբարշավի նյութերը, որոնց գրի են առնված անձամբ իր՝ Լալայանի և նրա արշավախմբի մեջ մտնող հայ ժողովրդական բանահյուսության երախտավոր մշակների կողմից:

Այդ հեքիաթների ձեռագրերը այժմ պահպանվում են Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Ժողովրդական բանահյուսության արխիվի Երվանդ Լալայանի ֆոնդում¹:

Այդ հարուստ ֆոնդերից ընտրել ենք ներկա հատորի տեղավայրերին համապատասխան՝ Ալեքսանդրապոլի, Բասենի, Էրզրումի (Կարնո) բարբառներով եղած թվով 45 հեքիաթներ, որոնք տպագրվում են առաջին անգամ:

Սույն հատորում տեղ են գտել նաև դարձյալ Երվանդ Լալայանի Ջավախքում գրի առած և 1911 թվականին Ալեքսանդրապոլում հրատարակված «Պատավառունց» խորագրով գրքուկի չորս հեքիաթները:

Բացի Երվանդ Լալայանի խմբարշավի գրի առած անտիպ նյութերից այս հատորը բովանդակում է նաև բանահավաք Ադ. Մխիթարյանցի՝ «Փջրանքներ Եիրակի ամբարներից» խորագիրը կրող բանահյուսական ժողովածուի² վեց հեքիաթները (Ալեքսանդրապոլի բարբառով):

Այս հատորում տեղ գտած Եիրակի հեքիաթների մնացած մասը հավաքել և գրի են առել բանահավաքներ Տ. Նավասարդյանը, Հ. Վարդանյանը, Ն. Նիկողոսյանը և Վ. Բդոյանը, որոնց հավաքած նյութերի մասին կհիշատակվի ծանոթագրությունների բաժնում:



«Հայ ժողովրդական հեքիաթների» չորրորդ հատորում հիմնականում պահպանել ենք տեքստաբանական այն սկզբունքներն ու կանոնները, որոնք մշակված ու հաստատված են հեքիաթների գիտական հրատարակության համար, անշուշտ նկատի ունենալով նաև այս հատորի նյութերի բնույթն ու առանձնահատկությունները:

¹ Մինչև 1960 թ. այդ արխիվը պահպանվում էր ԳԱ Գրականության ինստիտուտում:

² Էմինյան ազգագրական ժողովածու, Ա հատոր, 1901:

ի տարբերություն նախորդ հատորների, որոնց դասակարգումը կատարված է տեղագրական-ազգագրական տեղաբաշխմամբ, ըստ որում յուրաքանչյուր հատորում հեքիաթները խմբավորված են ըստ իրենց բնույթի և սյուժեների, այս հատորը ունի որոշ առանձնահատկություններ, քանի որ բովանդակում է երեք առանձին խմբավորումներ:

Ելնելով դրանից հատորի հեքիաթները դասակարգել ենք ըստ հետևյալ բնական վայրերի՝

1. Եփրակ (Լենինական թաղաք), Նրա ջրջակայքի՝ Արթիկի, Ադիսի, Ախուրյանի, Ապարանի, Ղուկասյանի ջրջանները:

2. Բասեն (Երասխաձոր, Խար, Հարսնեքար ու Նարման Էջրեկի գյուղերը):

3. Զավախք (Ախալցխա, Ախալքալաք, Էրզրում):

Այս երեք խմբերից յուրաքանչյուրը հատորում ներկայացված են առանձին, բայց ամբողջ հատորի խորագիրը որոշ պայմանականությամբ դրված է՝ Եփրակ: Չնայած այդ խմբերի առանձնացմանը հեքիաթների համարակալումը հատորում միասնական է: «Հավելվածում» դրված հեքիաթներն ունեն առանձին համարակալում:

Ավելորդ չենք համարում այստեղ համառոտակի ջարդերել տեքստաբանական այն ընդհանուր սկզբունքները, որոնք կիրառված են նախորդ երեք և ներկա չորրորդ հատորում:

1. Չի խախտված հեքիաթների պատումների ամբողջականությունը. տպագրված ու անտիպ հեքիաթները չենք ենթարկել որևէ խմբագրման (հապավում, հավելում և այլն): Չենք ուղղել ասացողների ու գրի անողների «սխալները»՝ պատմելու ընթացքում դեմքերի, դեպքերի, թվերի շփոթում, անհամաձայնություն, սյուժետային գծից խոտորումներ: Այս կարգի «սխալները» ցույց ենք տվել համապատասխան հեքիաթի ծանոթագրության մեջ: Չենք ուղղել նաև ինչպես գրական, այնպես էլ օտար լեզուներից փոխառյալ այն բառերը կամ դարձվածքները, որոնք պատմողները գործածել են աղավաղված ձևով:

2. Պահպանել ենք հեքիաթների վերնագրերը՝ տպագրված թե անտիպ, իսկ այն հեքիաթները, որոնք վերնագիր չունեն, կամ լավագույն դեպքում՝ «հեքիաթ» վերնագիրն են կրում, ելնելով նրա բնույթից ու բովանդակությունից՝ վերնագրել ենք, այդ մասին նշելով ծանոթագրությունների մեջ:

3. Անաղարտ կերպով պահպանել ենք հեքիաթների լեզուն՝ հեքիաթները տպագրված են այնպես, ինչպես գրի են առել բանահավաքները ասացողներից, վերածելով միայն նոր ուղղագրության:

Ներկա հատորում միօրինակ ենք դարձրել մի շարք բառերի գրության տարբեր ձևերը միայն տվյալ հեքիաթի սահմաններում, որովհետև ներկա չորրորդ հատորը բովանդակում է տարբեր տեղավայրերի, տարբեր խմբավորումների հեքիաթները, ըստ որում յուրաքանչյուր տեղավայրի մեջ էլ մտնում են տարբեր վայրերից եկած ասացողների բարբառն ու խոսվածքը. այսպես օրինակ՝ Բասենի գավառի Երասխաձորի խոսվածքում օգտագործվում է՝ *կենն* (նորից) բառածևը, Խար գյուղի խոսվածքում՝ *գինն*, Զավախքում՝ *կենա*:

Բարբառի օրինաչափություններն արտահայտող ճշգրիտ գրառումներ ունի Երվանդ Լալայանը, որը լինելով Ալեքսանդրապոլցի, տիրապետելով Եփրակի բարբառին, հարապատ ու անաղարտ կերպով գրի է առել հեքիաթները, հետևողականորեն ու ճշտորեն պահպանելով բառերի բարբառային հնչումն ու գրությունը: Կան սակայն ասացողներ, որոնք Ալեքսանդրապոլցի լինելով գաղթել են այլուր և կրելով տեղական

խոսվածքի ազդեցությունը պատմել են ազավաղումներով, բանահավաքներն էլ հարավատ մնալով ասացողին՝ գրի են առել այնպես, ինչպես պատմել են նրանք: Այսպիսի օրինակներ կան երվանդ Լալայանի խմբարշավի ֆոնդում պահպանվող նյութերում:

Ընդհանուր առմամբ բարբառների հնչյունական-արտասանական իսկական պատկերը վերականգնելու նպատակով կամայական փոփոխություններ չենք արել, նկատի ունենալով, որ անթույլատրելի է դա գիտական հրատարակությունների համար: Հատորի վերջում եղած «Հավելված»-ում բերել ենք ներկա ժողովածուն բովանդակող լուրացանյուր տեղավայրի բարբառով ու խոսվածքներով հեքիաթների գիտական տառադարձությամբ նմուշներ:

4. Տվյալ հեքիաթում արտասանական-ուղղախոսական միասնությունն ստեղծելու համար միօրինակ ենք դարձրել նույն բառի գրության ձևը, նկատի ունենալով բարբառին կամ խոսվածքին հատուկ ճիշտ ձևը: Մնացած դեպքերում, երբ խոսքը վերաբերում է հնչյունափոխության կամ քերականական կողմին, ապա բառերի գրության տարբեր ձևերը թողել ենք նույնությամբ, ինչպես օրինակ՝ մեծ-մենծ, վեճծ, դատարկ-դաթտակ, ոսկի-օսկի, ողորմի-օղորմի, ականջ-անկաջ, կամուրջ-կարմունջ, տոպրակ-տորպակ, ուրսխանալ-ուբախնալ, աստծու-աստու և այլն:

5 Պահպանելով «Հայ ժողովրդական հեքիաթներ»-ի նախորդ երեք հատորների տեքստաբանական սկզբունքների միասնականությունը, չորրորդ հատորը կազմելիս մենք էլ հետևել ենք ու կատարել մի շարք ճշգրտումներ:

ա) Նախադաս կը մասնիկը, որը շատ ձեռագրերում անջատ է դրված, ներկա հատորում միացրել ենք և գրել առանց ը-ի՝ կը ելնի> կելնի, կը խոսի> կխոսի, կը տանի> կտանի և այլն:

բ) Ետադաս կը մասնիկը, որը ձեռագրերում միասին է գրված, անջատել ենք կերթակը> կերթա կը, ֆռֆռակը> ֆռֆռա կը, կարդակը> կարդա կը:

6. Բանավոր խոսքի նորբանգները հաղորդելու և հեքիաթների բովանդակությունը ճիշտ ըմբռնելու համար շատ կարևոր է կետադրական նշանների հետևողական օգտագործումը, մինչդեռ շատ ձեռագրերում դրանք բացակայում են: Այդ իսկ նպատակով ուղղել և ճշտել ենք տեքստերի պարբերությունների ու երկախոսությունների բաժանումը, որոշակի ենք դարձրել ռուղակի և անուղղակի խոսքի կիրառումը, եթե տվյալ ուղղակի խոսքի մեջ կա նաև ուրիշի ուղղակի խոսքը, տարբերելու համար վերջինս դրել ենք չակերտների մեջ: Պատահում է երբեմն, որ ուղղակի խոսքի ժամանակ ասացողը մոռանալով միջամտում է, և հանդես է գալիս ինքը իբրև գործող անձ, հերոսին հանդես բերելով երրորդ դեմքով («Մաջրում խոջի հեքիաթը»): Ըջտել ենք նաև կետադրությունը:

Տեքստերում մեծատառով ենք տվել հատուկ անունները, հերոսներին տրված մականունները, երևակայական վայրերի, երկրների անունները, ինչպես նաև իբրև գործող անձ հանդես բերված կենդանիների անունները:

7. Ուղղված են տեքստերում եղած բացահայտ սխալներն ու վրիպումները: Զեռագրերում եղած այն ընդմիջարկությունները, որոնք գալիս են բանահավաքներից ու ասացողներից (բառերի ու ոճերի բացատրություններ, առանձին դեպքերի մեկնաբանություն, հավելումներ և այլն) թողել ենք տեքստերում, առնելով փակագծի մեջ, կամ գծիկով ցույց տվել, երբեմն էլ տալով էջատակի ծանոթագրություններ:

Տողատակին հանդիպած ԾԱ, ԾԲ, ԾԿ նշանները նշանակում են ծանոթություն ասացողի, ծանոթություն բանահավաքի, ծանոթություն կազմողի:

«Հայ ժողովրդական հեքիաթներ»-ի սույն չորրորդ հատորում ընդգրկված Կաթինի, Բասենի, Շիրակի ու Ջավախքի հեքիաթները անմիջականորեն արտացոլում են վերոհիշյալ գավառների վաղեմի բնակիչների լեզուն ու բարբառը: Արանցից յուրաքանչյուրն ունի իր հատուկ խոսվածքն ու կենցաղը, այսպես՝ Կաթինի մալր բարբառոց բավականաչափ տարբերվում են Բասենի, Ջավախքի, Շիրակի (Ալեքսանդրապոլ) և նրա շրջակայքի գյուղերի խոսվածքները:

Այս չորս գավառների բնակիչները գաղթելով մի տեղից մյուս տեղը, իրենց հետ տարել են հայրենի «լը» ճյուղին պատկանող իրենց բարբառը, խոսվածքը:

Վերոհիշյալներից յուրաքանչյուրը պահպանելով տվյալ գավառի խոսվածքի առանձնահատկությունները, ունեն նաև մի շարք ընդհանրություններ:

Տեսնենք այս ընդհանրություններն ու առանձնահատկությունները:

Ջայնավորների և երկբարբառների փոփոխություն.

1. Ա>ը (ասել-ըսել, անել-ընել), 2. ա> է (անել-էնել), 3. ե>է (երեկ-էրեկ, եկել-էկել, էլնել-էլնել, եփել-էփել, երազ-էրազ, էրած), 4. ե> ի (երեք-իրեք, երեկո-իրիկուն), 5. ալ> է (մալր-մեր, հալր-հեր, Ախալքալաք՝ մար, հար (փայտ-փետ, եղբայր-աղբեր), 6. ոյ> ու (լուկա-լուս, քոյր-քուր), 7. իւ> ու (հարիւր-հարուր, ծիւն-ծուն, արիւն-արուն), 8. ո>օ (ոսկի-օսկի, ողորմի-օղորմի, որ-օր) ես որ գնացի, ես օր գնացի), 9. ի>ը (ինչի-ընչի), 10. հ>լ (պահել-պայել):

Բազմալանների տեղաշարժ և մասնակի փոփոխություններ՝ հ>ֆ (հոգ-ֆոգ, հոս-ֆոս, հոտ-ֆոտ, հոր-ֆոր), կ>գ (կելնի-գելնի, կուգա-գուգա), 2. Բառամիջում ք-ից առաջ ն-ն դառնում է մ (չումքի-չումքի), 3. Բառամիջում ն-ն դ-ից առաջ դառնում է մ (ջանդակ-ջամդակ), 4. Բառասկզբում ն-ն մ-ից առաջ դառնում է լ (նման-լման, աննման-անլման), 5. Հաճախ նկատվում է բազմալանների ետևառաջություն (դատարկ-դարտակ, ականջ-անկաջ, դովլաթ-դովաթ, կամուրջ-կարմունջ), 6. ս-ից առաջ ր-ն սղվում է (դուրս-դուս, ներս-ներս), 7. Հաճախ գոլականների ու բայերի բառամիջիս ա-ն սղվում է (աջակերտ-աջկերտ, ուրախացավ-ուրախցավ):

Բասենի և Շիրակի խոսվածքներում մի շարք բառեր սկզբից ընդունում են շնչեղ «հ», որը ձեռագրերում և առհասարակ սկզբնաղբյուրներում նշանակված է «չ» կիսաձայնով, մինչդեռ նա ոչ «չ» է, ոչ «հ», այլ շնչեղ հ, որը տարբերակելու համար նշանակում ենք հ՝ ձևով (հ՛ուր):

Սա, դա, նա դերանունները Շիրակի բարբառում դառնում են՝ իսիկ, իդիկ, ինիկ, հոգնակին՝ խոնք, իդոնք, ինոնք: Կարնո և Ջավախքի խոսվածքում ասիկ, ադիկ, անիկ, ասոնք, ադոնք, անոնք:

Բայի սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակը կազմվում է գրաբարի համապատասխան ձևերի վրա ավելանալով կը մասնիկը: Մի թվականը խոսքի մասերի հետ գործածելիս ի-ն սղվում է և մ-ն միանում է խոսքին՝ մի բան, մի խոսք, մի քիչ-բանմ, խոսքմ, քիչմ: Այս դեպքում մ-ի վրա դնում ենք ապաթարց բանմ՝ խոսքմ՝ քիչմ: Հրամայականում վերոհիշյալ խոսվածքները ունեն ե վերջավորությունը (վարն, քցն, աջն):

Անորոշ դերբայը ընթացակցական դերբայ գործածվելիս ունենում է և ով և են վերջավորությունը (վազելով-վազելեն, խոսելով-խոսելեն, ասելով-ասելեն, ըսելեն, անելով-անելեն, էնելեն):

«Հայ ժողովրդական հեքիաթների» չորրորդ հատորն ունի հետևյալ կառուցվածքը.

1. Հիմնական տեքստեր— Այս բաժնում դրել ենք՝

ա) Շիրակի դաշտավայրի՝ Լենինական քաղաքի, Ադինի, Արթիկի, Այսուրյանի քաղանների ժողովրդական հեքիաթները, թվով 26 հատ:

բ) Բասենի շրջանի ժողովրդական հեքիաթները, թվով 35 հատ:

գ) Ջավախքի (Ախալցխա, Ախալքալաք, Հրվոում) հեքիաթները, թվով 8 հատ:

Վերոհիշյալ երեք բաժինների հեքիաթները դասավորված են նույն սկզբունքով, ինչպես նախորդ երեք հատորները, այսինքն՝ սկզբում դրված են հրաշալիքալից (սախարդական), ապա իրականում (կենցաղային) հեքիաթները, սակայն առանց բաժինների վերնագիր տալու:

2. Հավելված 1-ին— Այստեղ դրել ենք այն հեքիաթները, որոնք իրենց բովանդակությամբ թույլ են, չունեն գեղարվեստական-պատմողական այս վարպետությունն ու արժեքը, ինչ որ հիմնական տեսքում բաժնիկը:

3. Հավելված 2-րդ.— Այստեղ դրել ենք հատորի հիմնական տեսքներից վերցրած՝ լուրաքանչուր խմբից մեկական հեքիաթ, տվյալ տեղավայրի խոսվածքի ծագական ու արտասանական առանձնահատկությունների գիտական ճշգրիտ տառադարձությամբ:

4. Ծանոթագրություններ.— Այստեղ հարթանաությամբ տալիս ենք հատորում գտնված լուրաքանչուր հեքիաթի մասին ունեցած տեղեկությունները՝ հեքիաթի գրառման վայրն ու ժամանակը, ասացողների մասին եղած կենսագրական տեղեկությունները, հեքիաթը երբ և որտեղ է հրատարակված, իսկ եթե ձեռագիր է, որտեղ է գտնվում և ով է գրի առել: Ցույց է տրվում նաև այս հատորի նյութերի առնչությունը միմյանց՝ տարբեր բաժինների հեքիաթների և ներկա հրատարակության նախորդ երեք հատորների հեքիաթների սլուծների հետ:

5. Բառարան.— Բացատրված է չորրորդ հատորում եղած բարբառային դժվար հասկանալի և փոխառյալ բառերը: Բառարանում ցույց չեն տրված, թե փոխառյալ բառերը ի՞նչ լեզվից են, համարելով այն սույն գրքի նպատակից դուրս:

6. Ցանկեր, որտեղ տվել ենք՝ աշխարհագրական տեղավայրերն ու հատուկ անունները այբբենական կարգով, հեքիաթներն ըստ տեղի և ասացողների, ըստ այբբենական կարգի և հերթական համարակալումով:

